

կնիքովը կը փակենք Վարազի պատմութիւնը:

Վարազի վանքը իբրև միանգամայն վանի առաջնորդարան եւ սիրուած ուխտատեղի ունեցած է հարստութիւն — անշարժ ու շարժական: Արդէն կարգացինք թէ ինչ գանձեր Չոմար հոն երեւան հանեց: Բնական է որ անոնք հրապուրէին օտարին աչքը: Ոչ թէ միայն Չոմար, այլ դեռ շատերը զայն կողպուտի ենթարկեցին ու աւերեցին, սակայն անոր պահպան Հայութիւնը զիտցաւ զայն առանց յուսալքումի նորէն կանգնել ու նորէն շինեցնել-երբեմն աւելի ճոխ եւ ապա աւելի համեստ: Երբ Հայութիւնը անոր քովէն ստիպուեցաւ հեռանալ, ան ալ կըբեցաւ ինկաւ:

Վարազ ունեցեր է 619 կտոր վարելահող եւ ահագին տարածութեամբ արօտատեղի (Ազգր. Հանդ., 1911, էջ 76. հմմտ. դեռ Աշխատանք, 1911, էջ 593—594. Մուրճ, 1903, էջ 36. Փորձ, 1879, Դ., էջ 60): Ունէր 25 է աւելի զիւր, որոնցմէ մին էր Արշակաւան, ուր կար Ս. Աստուածածին անուն վանք մը (Շէրենց, Սրբավայրեր, էջ 66): Զեռագրի մը յիշատակարանին մէջ կայ՝ «Եւ թեմք սրբոյ ուխտիս են այսոքիկ. նախ օրհնեալ մայրաքաղաքն Վան, մետասան եկեղեցիքն. եւ զիւրօրեայքն. նախ Դուռպաշն, Առեղ, Եմալ, Կենդանանց, Շուշանց, Սղղայ, Հարարք, Աւանց, Շահարդի, Լէսիկ, Աւերակի, Աղնականց, Ծաղ, Դարգօսնենց, Արաջ, Ալկուշաղալ, Բայրազ, Բողանց, Ատոզալ, Կոճ, Աղճանկերան, Մանդան<sup>67</sup>» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 91):

Վարազ շատ նուէր կը ստանար մանաւանդ իր տօներու օրերը, որոնք էին Համբարձման Հինգշաբթին եւ Ս. Խաչի տօնը: Այդ օրերուն Վարազ ուխտաւորներու խումն բաղմութիւն մըն էր որ կ'աճապարէր Ս. Խաչի կամ Ս. Նշանի երկրպագութեան (Գեղունի, 1905, էջ 69 եւ Շէրենց, Սրբավայրեր, էջ 57):

Վարազայ վանքը Վասպուրականի մասնաւորապէս եւ Հայաստանի ընդհանրապէս ամէնէն անուանի վանքերէն մէկը եղած է:

<sup>67</sup> Կ. Պարսոյ աղբ. ժողովին 1867ին առաջարկ կ'ըլլար Վարազի յանձնել Հոգեաց, Ս. Բարդուղիմէոսի, Սախապատու եւ Ս. Խաչի վանքերը (Մասիս, 1867, թ. 813):

Դժուարին ու ծանր պարագաներու դիմադրելով դարեր երկար ու շատ պահած է ոչ միայն իր գոյութիւնը, այլ եւ իր գոյութեան արդար իրաւունքը: Ըլլալով միանգամայն վանի առաջնորդարան ունեցած է լայն գործունէութիւն եւ այն հոծ բաղմութեան հետ: Եղած է՝ «Կենդրոն մը ուր զարգացաւ հայ զրջազրութեան ու մանրանկարչութեան արուեստը, ուր հոգեւորական մատենագիրներ<sup>68</sup> ու տաղասացներ փայլեցան» (Աճէմեան Հայկ, Հայոց Հայրիկը, էջ 246): «Մտուզիւ Վարազը բնութեան զեղարուեստի մանրանկարն է: Վարազ տեսնողը անմոտանալի ապաւորութեան տակ կը մնայ: Վարազը չէն էր... զարդարուած էր երբեմն «բազում կրօնաւորօք եւ երկնագոմար դասու սուրբ քահանայիւք, բայց ինչ է ներկայացնում այժմ — աւերակների կոյտ... իմ արցունքները թող խառնուին Վարազի մոխիրների հետ» (Արաքս, 1898, էջ 65): Խառնուելու Վասպուրականցիներու արցունքները — բոլորի՛նք — շաղախելու եւ կերտելու համար Նոր Վարազ մը, վասն զի Հին Վարազը չկա՛ր<sup>69</sup>:

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

ԳՆՈՒՆԵՐՑ ԵՒ ԱՌԲԵՐԱՆԻՒ ՎԱՆՔԵՐԸ<sup>1</sup>

Գնունիք-թիմար Վան-Տոսպի հիւսիսային կողմն է, որ ժամանակ մը Ամիակ բերդի անունով ալ կոչուած է եւ մասով մը Վան-Տոսպի եւ մասով մըն ալ Բերկրիի գաւառակ եղած: Իսկ Բերկրին հին Ասրերանին է: Վարդան Աշխարհապարկը կը գրէ՝ «Ասրերանի (Ասրերունիք) եւ Տարբերունի Բերկրի է, ուր կայ սուրբ ուխտն տէր Յուսկան որդւոյն (Saint-Martin, Mémoires, II, էջ 426): Բերկրի է՝ «Գաւառ ընդ մէջ Վանայ եւ Արճիշոյ ձգեալ յարեւելս հիւսիսոյ ծովուն Վանայ» (Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 167):

<sup>68</sup> Հարեւանցի յիշուին Ատոմ հայր Վարազայ, Բարսեղ, Գրիգոր, Յովհաննէս եւ Ստեփանոս Վարազեցիները: — Վարազ «մայրաքաղաք» էր եւ ունէր ձեռագիրներու ճոխ հաւաքածոյ:

<sup>69</sup> Յովհաննէս Հիւսեան վարդապետը 1915ին էջմիածին կը տեղեկագրէր՝ «Վարազայ վանքը զայցինք ճիշդ Լիմ անապատի վիճակն ունէր, եկեղեցւոյ պատեր, յատակներ քանդուած ու կոտորուած էին» (Արարատ, 1915, էջ 863—864):

<sup>1</sup> Գնունեաց Լիմ եւ Կտուց անապատներու մասին խօսուած է «Բնութեանց ծովի կողմերու անապատներու ու վանքերը» մասին մէջ:

1. ԱԼԵՐՈՒ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻ ԵՒ Ս. ԳԷՈՐԳԻ ՎԱՆՔԵՐԸ

Կտուց անապատի աղարակի հիւսիսարեւելեան կողմը՝ մէկ ժամ հեռաւորութեամբ կը գտնուի Ալիւր կամ Ալլուր զիւղը, որ ունի երկու վանք՝ Ս. Աստուածածին եւ Ս. Գէորգ:

Ս. Աստուածածին շինուած է զիւղէն 6—7 քարնիկէց հեռու: Սրբատաշ քարերով կառուցուած հասարակ շէնք մըն է (Միրախորեան, Ուղեւորութիւն, Բ., էջ 280): Հին հաստատութիւն մը կը թուի ըլլալ, որովհետեւ տաճարին հիւսիսային պատին զրօի երեսին վրայ կայ խաչքար մը հետեւեալ արձանագրութեամբ՝ «Ի ՈԿԳ (1214) թուի այս խաչ կենսատու եւ նշան սիրոյ հաշտութեան առ մարդիկ, որք երկրպագէք զԱճճրեւ քահանայ յիշատիք ի Քրիստոս եւ զՅովնէս զճող» (Ազգր. Հանդ., 1911, էջ 99):

Կտուց անապատի իրաւասութեան տակ ինկած է<sup>2</sup> եւ ունեցած է շատ մը կալուածներ, պողատու ծառերով պարտէզներ եւ զիւղատնտեսական պարագաներ (Սարգիսեան, Տեղագրութիւնը, էջ 265 եւ Շէրենց, Սրբավայրեր, էջ 74):

Ալիւրի միւս վանքը Ս. Գէորգ լեռան մը վրայ շինուած է եւ ինչպէս կը թուի արդէն Սարգիսեանի օրով աւերակ էր (Տեղագրութիւնը, էջ 265) եթէ անոր աչքին առջեւ եղած եկեղեցւոյ քարուքանդ որմերը՝ կարմիր վանքի որմերը չէին (Միրախորեան, Ուղեւորութիւն, Բ., էջ 278): Կրնայ ըլլալ որ Կարմիր վանք եւ Ս. Գէորգ նոյն եղած ըլլան: Ա. Դաւրիթեցին կը յիշատակէ թէ վանի ծառերը երկրաշարժին Ալիւրու վանքն ալ կործանեցաւ (էջ 492), սակայն առանց անունը յիշելու (Բնաշխ. Բառարան, էջ 54): Երկու վանքերս ալ կը յիշուին յիշատակարանի մը մէջ, որուն համեմատ Պօղոս 1599ին կը գրէ ժամագիրք մը՝ «Ի դուռն Ս. Գէորգայ եւ սուրբ Աստուածածինին» (Ակիւնեան Հ. Ն., սուրբ Աստուածածինին): 1884ին Ալիւրու վանքին վանահայր էր Պետրոս Վանեցի (Արեւելք, 1884, թ. 214): Կողոպտուած է 1895ին (հմմտ. Արարատ, 1896, էջ 89):

2. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻ (ԱՐՁԱԿՈՒ) ՎԱՆՔԸ

Արջակ կամ Հառչակ զիւղի արեւելեան հարաւային կողմը՝ բլուրի մը ստորոտը՝

<sup>2</sup> Միրախորեան կը գրէ թէ Լիմ կը վերաբերէր (Անդ, էջ 280): Անոր մօտն է Կարմիր վանք աւերակ (Անդ, էջ 279):

«Սուրբ Աստուածածին անուամբ մենաստանիկ մը շինուած է քարուկերով, այլ ոչ տաճարաւոր, որոյ շրջապատը չիք շինութիւն, բայց եթէ մի քանի ուռենոյ ծառեր՝ շուք տուող այդ ամայի մենաստանին» (Միրախորեան, Ուղեւորութիւն, Բ., էջ 128):

Ժէ. դարուն հոս գրուած ձառնորթի մը յիշատակարանին մէջ կայ սա զիտողութիւնը՝ «Յերկիրս Վասպուրականի ի վանքս Առջակու ոչ թէ անուն սորա է Առջակ, այլ Արձակ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի դրանս» (Սարգիսեան, Մայր Յուլ., էջ 382):

Վանի ահաւոր երկրաշարժէն աւերուած վանքերէն է (Առ. Դաւ., էջ 492): Ենթակայ եղեր է Վարազի, ուխտի օրն եղած է վերափոխման տօնը (Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 151. Շէրենց, Սրբավայրեր, էջ 83—84): Իր առաջնորդներէն Դանիէլ Վ. Թոռունեան հոն դպրոց կը բանայ, բայց 1896ի ջարդերու պատճառով կը վանքը աղաւաղելի վիճակի կը մատուցի (Աշխատանք, 1911, էջ 425—426. Արձագանք, 1884, էջ 535. Արեւելք, 1884, թ. 214):

3. ԱՐԵՎԱՆԻՑ ՎԱՆՔԸ

Արեւանից վանքը հիմնուած է Գնունեաց գաւառի մէջ: Իր անունը ծանօթ է յիշատակարանէս՝ «Զվերջին ստացող սուրբ աւետարանիս զուսթայ Սենեքարիմ յիշեցէք ի Քրիստոս...: Եւ արդ ես ուսթայ Սենեքարիմ եւ կողակիցն իմ ի նախ զնեցինք զսուրբ աւետարանս ի թուին Ռ եւ ՃԱ... եւ տուաք յիշատակ ի դուռն Արեւանից վանից սուրբ Աստուածածնին մերձ բերդի Ամիլոյ ծովահայեաց ամրոցին» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 462):

4—5. ԵՐԵՐԱՅ Ս. ՍԱՀԱԿԻ ԵՒ ԽԱՉԱԿՈՒՅԻ ՎԱՆՔԵՐԸ

Թիմարայ Երերին կամ Էրէրին զիւղի հարաւակողմը բարձրացող լեռան լանջին կը հանդի Ս. Սահակայ վանքը, որ պարսպապատ է եւ բաղկացած դմբեթայրի տաճարէ եւ հասարակ դարպասէ (Լալայեանց, Ազգր. Հանդ., 1910, էջ 99. Արեւելք, 1901, թ. 4785, Միրախորեան, Ուղեւորութիւն, Բ., էջ 280. Բնաշխ. Բառարան, էջ 835): Հ. Ինճիճեան կը գրէ՝ «Վանք իբր ութ արեգայից ի վերան լեռին եւ եկեղեցի նորա յանուն սրբոյն Սահակայ Պարթեւի իբր 3 ժամաւ հեռի ի բերդէն Համկոյ: Յուլյանեն ի

սմա զաջն սրբոյն, ի սմին եկեղեցւոյ է եւ տապան Տեառն Յուսկայ, որ է հայր Ստեփաննոսի վարդապետի ԺԳ. դարուն<sup>3</sup>: Աստ նստի այժմ աթոռակալ կաթողիկոսին Աղթամարայ (Նոր Հայաստան, էջ 149): Եւրենց կը գրէ՝ «Ներկայում եւ այդ հինաւուրց աւերակներէց մնացած զարդն ու զարդարանքն՝ միայն մի փոքրիկ մատուռն է» (Սրբավայրեր, էջ 176), ուր դեռ մինչեւ տեղահանութեան դժբախտ ժամանակը Վասպուրահանցին ուխտի կ'երթար: Սարգիսեանի օրով արդէն անբնակ եղած է (Տեղագրութիւնք, էջ 265), սակայն ետքէն դարձեալ կեանք մտած է մէջը: Ներսէս Արժկեցին 1884ին հոն վանահայր էր (Արեւելք, 1884, Թ. 214) եւ Մակար վարդապետ Տէր Յովհաննիսեան կը ծրագրէր զայն Լիմի մէջ բացուելիք վարժարանին ամարանոցն ընել (Բիւզանդիոն, 1911, Թ. 4366 եւ 4368):

Հոս 1431ին Յակոբ կը գրէ Վարք Հարանց եւ 1432ին Գաւթ կրօնաւոր Մաշթոց մը (Կար., Յուլ. էջ 95, 801; հմմտ. Նօտարք, էջ 95 եւ 99): Իսկ 1463ին՝ «ի վանքս Երեւան ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Գէորգայ զաւարժարի» Մաղաքիա կը գրէ Աւետարան մը (Սմբատեան, Երնջակ, էջ 314, ուշագիւր ըլլալու է՝ Ս. Սահակ անունը չկայ եւ Ս. Աստուածածին եւ Ս. Գէորգ կը յիշուին, ինչպէս եւ նախախորդին մէջ միայն Ս. Աստուածածին)<sup>4</sup>:

Փիլիպպոս արեղան 1597ին կը գրէ՝ «Ես փիլիպպոս սուտանուն արեղայ կաղմեցի գտուրք աւետարանս ի վանքն Ս. Սահակի եւ ի հրաշից տէր Յուսկայ եւ որդւոյն Ստեփաննոս վարդապետին, որ յուտի կոճն արար նշան» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 216):

Գուցէ Ս. Սահակի վանքը կոչուած է նաեւ Պաշտօնաւոր մերձաւոր համանուն լեռան վրայէն: 1571ին գրուած աւետարանի մը

<sup>3</sup> Կը պատմուի թէ ինքնին Ստեփանոս Արզելան վանքէն կ'ըլլէ՝ «Գնալ ի լեռնն որ կոչի Պաշտօնաւոր եւ անդ առանձնանալ ի սուրբ անապատին, որ կոչի Երէր-նափանք» (Հայկական Գ. Տէր Մկրտչեան, էջ 87—90. հմմտ. ընդարձակօրէն Արզելան վանք): Հաւանօրէն այս Ս. Սահակայ՝ 1329ին կը տրուի վահան մը ընծայ (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 182):  
<sup>4</sup> 1573ին գրուած Աւետարանի մը մէջ կայ՝ «Եւ յետոյ եկեալ ընակեցաւ ի յերկիրն Գնունի որ այժմ ասի Ամուկ, ի լեռնն սուրբ որ կոչի Պաշտօնաւոր ի յանապատս սուրբ Սահակայ եւ հրաշիցն որդւոյն տէր Յուսկայ ձեռամբ անաբձեւա... արեղի Աստուածա-արայ...: Աստուած ողորմի ասացէք նալլանդ Յակոբուն, որ սուրբ Սահակայ առաջնորդին ձին անվարձ նալլէ, որ ողբի արար» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 680):

յիշատակարանին մէջ կայ թէ ան կը սկսի գրուել՝ «Ի սուրբ անապատն Պաշտօնաւոր եւ Հրաշից տէր Յուսկայ որդւոյ եւ կ'աւարտի ի վանս Սուխարայ» (Ակինեան Հ. Ն., Հաւաքումն Յիշատակարանաց, Հ. Պատուրեանէ. հմմտ. վերը):

6. ԵՂԱՎԱՆԻՔ

Բերկրիի շարաթացեալ վանքերէն է Եղավանքը, որ Տ. Յուսկան որդւոյ մենատանին մերձ է (Նօտարք, էջ 70, ծն. 2): Հոս Յակոբ արեղան 1422ին կը գրէ աւետարան մը՝ «Ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոսիս եւ արեամբ ներկեալ նահատակացն Բրիտոսի, պատկողի սրբոց Վարդանանցն ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս Մեղքիսեղ հեղահողի եւ աստուածարան վարդապետի...» (Նօտարք, էջ 69/70 եւ Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 349):

7. ԵՄՄԻՍԻՆ ԿԱՄ ԲԱՁԵՆԻՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆԻՔ

«Անկանի ուխտս ի դաւառին Գնունեաց մերձ գեղջն Երէրինայ շինեալ ի սիրտ խաչ-կատար լեռին յանդիման վանուց սուրբ Սահակայ Պարթեւին եւ է այժմ անցեալ զող թէ ութսուն ամաց հետէ ի շարս շարաթացեալ վանօրէից» (Նօտարք, էջ 179) կամ Լեւոնեանի համեմատ՝ «Մօտ է Ամուկ (կամ Ամուկ) եւ Երէրին գիւղերուն: Ծովեղերեայ եւ շատ զաւարձալի վանք մըն է: Ունի ընդարձակ թիթատան եւ պարտէզ մը եւ շատ անտառներ» (Բիւզանդիոն, 1900, Թ. 1200): Մակար վարդապետ Տէր Յովհաննիսեանի խօսքով՝ վանքս ունի մատուռ մը (Վերին էջմիածին) եւ եկեղեցի մը (Ներքին էջմիածին) իսկ Լալայեանց գիտէ մէկ մատուռ եւ երկու եկեղեցի, մին Ս. Աստուածածին եւ միւսը Ս. էջմիածին, ինչպէս Հ. Ինճիճեան եւս կը յիշէ կանխաւ (Բիւզանդիոն, 1911, Թ. 4368. Աղգր. Հանդ., 1911, էջ 99. Նոր Հայաստան, էջ 150):

Աւանդութեան համեմատ այս վանքն անապատականներու ճգնաւայր եղած է եւ իրրեւ թէ այդ ճգնաւորներն Միածնի էջր տեսեր են եւ ատկէ մենաստանին անունը՝ էջմիածին կոչուած (Շէրենց, Սրբավայրեր, էջ 75. Աղգր. Հանդ., 1911, էջ 99):

<sup>5</sup> Հմմտ. Բաղենից Ս. Աստուածածին ի խիզան՝ ի Սպակեթա: — Զարբհանէլեան կը գրէ՝ (Պոմ. հայ. գր., Բ., էջ 159) Փառավանք, Բաղենից վանք ի Գնանիս (ՁԴ):

Հոս 1455ին կը գրուի աւետարան մը՝ «Ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի եւ նորաչն սուրբ էջմիածնին, որ անուամբ Բաղենից վանք յորջորջի» (Թորոս Աղբար, Բ., էջ 387—388 կամ Նօտարք, էջ 179): Այս յիշատակագրութենէն յայտնի կ'ըլլայ որ նախ Ս. Աստուածածին շինուած է եւ ապա էջմիածին եկեղեցին. եթէ, «նորաչն» բառով «նորոգուած» չի հասկցուիր: Հ. Պատուրեանի ծանօթ է յիշատակարան մը, որուն համեմատ 1475ին կը գրուի աւետարան մը՝ «Ընդ հովանեաւ սուրբ էջմիածնի եւ սուրբ Աստուածածնի» (հմմտ. Ակինեան Հ. Ն., Հաւաքումն Յիշատակարանաց): 1566ին կը գրուի ուրիշ աւետարան մը, որուն մէջ կը յիշուի Ներսէս առաջնորդը՝ «Գրեցաւ սուրբ աւետարանս ի յանապատին, որ կոչի Բաղենց ընդ հովանեաւ սուրբ էջմիածնին ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս սրբասէր եւ հեղահողի Ներսէս վարդապետի» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 668): Նոյն թուականին կը կազմուի Աւետարան մը — գրուած 1426ին: Կազմողն է՝ «Աստուածատուր արեղայ յանապատէն Բաղենից ընդ հովանեաւ Ս. էջմիածնի եւ Ս. Աստուածածնի» (Ակինեան Հ. Ն., Հաւաքումն Յիշատակարանաց, Հ. Պատուրեանէ):

Ծանօթ են ինձ դեռ երկու յիշատակագրութիւններ, որոնց համեմատ Աւետարան մը 1541ին (Թօփճեան, Յուլ. Գաղ., Բ., էջ 51—52) եւ ուրիշ Աւետարան 1475ին (վերը յիշուածէն տարբեր. հմմտ. Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 480) կը գրուին «Բաղենց կամ Բաղենից» վանք եւ կը յիշատակուի միայն Ս. Աստուածածին: Հետեւաբար կուի միայն Ս. Աստուածածին: Հետեւաբար շատ լաւ կարելի է նաեւ մտածել որ անոնք շատ լաւ կարելի է նաեւ մտածել որ անոնք գրուած ըլլան Պիղանի Սպակեթա Բաղենց գրուած ըլլան Պիղանի հովանիին տակ: 1475ին Ս. Աստուածածնի հովանիին տակ: 1475ին գրուածին յիշատակարանը ունի սա կարեւոր յիշատակութիւնը՝ «Գրեցաւ սուրբ աւետարանս ի յանապատիս որ կոչի Բաղենց ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս հեղահողի Յակոբ եպիսկոպոսին եւ հէրպտութեան կաթարապետ արեղային, յոյժ խոնարհ եւ բարեմիտ, քրտնաջան ի բանս սուրբ ուխտիս ի թուրքերութեանս Հայոց ԶԻԴ ի դառն եւ ի նեղ ժամանակիս» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 480):

Բաղենից մենաստանը կը պատկանէր Լիմի եւ անկէ կը կառավարուէր (Արեւելք, 1901, Թ. 478): Հոս կը մեռնի Կարապետ Բ.

(Կաթ. Աղթամարի) 1804ին (Բիւզանդիոն, 1903, Թ. 1200. Ակինեան Հ. Ն., Գաւազանագիրք, էջ 163):

8. Ս. ԹԱԳԷԻ ՎԱՆԻՔ

Բերկրիի Պղտիկ գիւղէն բաւական հեռու կը տեսնուի Ս. Թաղէոս անունով վանք մը, որ ամայացած է (Միրախորեան, Ուղեւորութիւն, Գ., էջ 23):

9. ԵՄՄԻՍԻՆ ՏԻՐԱՄՈՐ ԿԱՄ ԸՆԾԱՅԵԱՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆԻՔ

Ձանիկ կամ ձանիկ գիւղի արեւելեան կողմը կը հիմնուի այս վանքը: Ունի գեղեցկաչէն եկեղեցի մը պատկուած սպիտակ եւ վառուար գմբէթով մը<sup>6</sup>: Աւանդութեան համեմատ վանքիս տեղը ժամանակին կառուին մը կայ եղեր, ուր կը պաշտօնավարեն եղեր երեք եղբայրներ՝ Շիրակ, Զիրակ եւ Միրաք: Սակայն անոնք Ս. Թաղէոս Առաքեալի (Միրախորեան, Ուղեւորութիւն, Բ., էջ 273—284) կամ Ս. Ներսէս Պարթեւի քարոզութեամբ (Շէրենց, Սրբավայրեր, էջ 79) քրիստոնեայ կ'ըլլան եւ զիրենք քրիստոնէութեան առաջնորդին հետ այս վանքը կը կանդնեն:

Աւանդութիւնը պահած է նաեւ Ս. Ահարոն վանահօր անունը, որ շատ չնցուցած ու զարգացուցած է վանքը (Միրախորեան, Անդ, էջ 274): Հ. Սարգիսեան (Տեղագրութիւնք, էջ 265) հետեւեալ կարեւոր տեղեկութիւնները կու տայ՝ «Տիրամայր-հետի է ի տանէն Լմայ իրրու երեք ժամաւ եւ է ուխտատեղի անուանի յոյժ մինչեւ ի հեռաւոր աշխարհաց յաճախել բաղմութեան: Յառաջագոյն մենաստան էր, այլ եկեղեցին եւեթ մնացեալ է տաճարաւ յորում եւ զերեզման, ամիոփեալ ունելով յինքեան զյաշակ կամ զվրապատ Տիրամօրն բերեալ ձեռամբ Թագէի առաքելոյ: Գիրք նորա հանգերձ առնթեր զիւղին բարձրահայեաց եւ զուարձալի...: Ամենայն խեղանգամք եւ կոյրք եւ որ անբժշկելի վիրօք են լցեալ զան ի զիւղս

<sup>6</sup> Բնութեանց ծովի արեւելեան եղբրքը, Լիմ անապատի մերձ, վանէն 7—8 ժամ հեռու է Ասպարածին կամ Աղպարացայ (Ս. Աստուածածնի) վանքը, լոկ քարաչէն եւ գմբէթաւոր եկեղեցի մը առանց որ ուրիշ շինութեան եւ միաբանութեան: Գիւղայինները վանականները վանած են եւ անոր արեւացած (հմմտ. Մասիս լեռների հարաւային ստորոտները, Թիֆլիս 1882, էջ 25): Եկեղեցւոյ մէջ կայ գմբէթաւոր գերեզման մը, ուր աւանդութեան համաձայն թաղուած է Ս. Կոյսի գլխի չորր: Ունեցած է շատ եկամուտ (Փարձ, 1879, IV, էջ 62):

յայս գտանել բժշկութիւն եւ կեան յողորմութենէ ուխտաւորաց: Չվերալիցան զայնպիսի սովոր են կոչել Տիրամէր կամ Տիրամօր հարած կամ առած<sup>7</sup>: Նուիրակը ուխտատեղւոյս համարին նոքին խեղանդամքն, որք ընկերակցութեամբ առն քաջողջի հրամանաւ գիւղականացն ելանեն յայլ եւ այլ դաւառս ի հաւաքել զողորմութիւն յանուն ուխտին եւ դարձեալ ի գիւղն յինքեանս բաժանեն զայն գիւղականքն: Նուիրակը ի շրջագային եթէ առ ումեք տեսցեն յեղանց կամ ի կովուց խայտախարիւս, որպէս ինչ սահմանեալ են յինքեանս, ազդ առնեն տեանն իւրում թէ այդ անասուն Տիրամօր է սեփական զի նշան նորա յայտնի երեւի ի դա. եւ տէրն երկուցեալ ի խղճէ մտաց եւ կամ յանիծից նոցա, տայ ցնոսս անհակառակ, զի եւ ամենայն ուրեք ուր եւ սովոր են նոքա՝ ծանօթ են բնակչաց իրքս» (Հմմտ. նաեւ Ազգր. Հանդ., 1916, էջ 210 եւ Մանանայ, էջ 119):

Նոյնը կը հաստատէ Փիւրղալէմեան՝

«Այս գեղն երբեմն վանք եղեալ է նազելի ի մեծ նահանգ Վասպուրական աշխարհի ինքն ընծայեաց Աստուածածին անուանի: Եւ առած բանս հաստին պատմիչք մեր յայտնի: ... Հայոց նախկին Լուսաւորիչ Թագէոս եւ նախակիրքն արեր շինման տաճարին, Իւր սուրբ ձեռք օծեր հիման քար սորին. Եւ պսակեր անուամբ ամբիծ կուսին. Իբր անհատ դանձ թողեր կուսին աստ փողքիկ Որոյ շնորհիւ տեսանեն նոր կեանս զողիք<sup>8</sup>»:

(Չորս Ընկերք, Թիֆլիս 1852, էջ 21):

Ռոմանոս վարդապետ 1276ին կը գրէ Աւետարան մը. «Ի թագաւորութեան Հայոց Լեւոնի, որդի Զապէլ թագուհւոյ դստեր Լեւոն թագաւորի եւ ի կաթողիկոսութեան Տեառն Ստեփաննոսի եւ մեր ընդ հովանեալ լեալ ընծայեաց Աստուածածնիս ի գաւառիս Վասպուրականիս» (Սարգիսեան, Մայր Յուլ. հայ. Ձեռ. Մխիթ. Վենետ., Ա., էջ 426): Ինճիճեան ժամանակին զայն կարգացած էր «եւ մեր ընդ հովանեալ լեալ Ընծայեաց Աստուածածնին ի գաւառիս Վասպուրականիս» եւ գիտել տուած էր «թուի լինել վանք» (Ստորագրութիւն, էջ 227):

<sup>7</sup> Նաեւ Տիրամօր խեղճ, իսկ ախտին անունը Տիրամօր կարս (Հմմտ. Մանանայ, էջ 122):  
<sup>8</sup> Հմմտ. եւ Շէրենց, Սրբավայրեր, էջ 79. Փորձ, 1879, IV, էջ 62. Միրախորեան, Ուղեւորութիւն, Բ., էջ 274—275 եւ Ազգր. Հանդ., 1916, էջ 210, ուր Ստեփան Տիրամօր եւ Տիրամայր վանքերն իրարմէ կը գահադանդանէ:

Յիշատակարանի մը մէջ կայ՝ «Ես խոջա Գիւղուկս տուի սուրբ Աւետարանս ի դուռն Ընծայից սուրբ Աստուածածնին» (Նոտարք, էջ 220):

Դարեան վարդապետն ունեցեր է կոնդակ մը, որուն նկարագրութիւնն ու բովանդակութիւնն համառօտիւ կու տայ Թօփիճեան (Յուլ. հայ. Ձեռ. Դարեան Վրդ., Բ., էջ 17). «Թիւ 31. 72 + 24 մեծութեամբ, ներքեւ տաճար. Ընծայեաց կամ Ծովահայեաց Աստուածածնի վանահայր Մարտիրոս եպիսկոպոս Արաճօյ օրհնութեան թղթովս «Շիրաքին, Միրաքին եւ Զիրաքին» կարգում է վերակացու վերոյիշեալ վանքի եւ յորդորում է ժողովրդականներին, որ առատ նուէրներ տան, որպէս զի կարող լինի 100ի չափ վանքում մնացող աղքատներին բաւականացնել: Գրեցաւ կոնդակս ի թուին ՌՄ Օղոստոսի 1, որ ի վանս Ընծայեաց սուրբ Աստուածածնին»:

Խաթուն Տիրամօր կամ Ընծայից վանքի ուխտի օրն էր՝ Վերափոխումն Ս. Աստուածածնի. երբ բաղմութիւն մը կը խուժէր հոն (Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 151. Շէրենց, Սրբավայրեր, էջ 78—80 եւ Սրբուհի-տեանց, Մանանայ, էջ 120—123): Ենթարկուած էր Լիմի գերիշխանութեան (Միրախորեան, Անդ, էջ 275):

Ունեցած է առատ հող (Հմմտ. Շէրենց, Սրբավայրեր, էջ 79 եւ Փորձ, IV, 1879, էջ 62):

10. ԵՆՈՒ ՎԱՆՔԸ

Ձանիկ գիւղի մերձ, Կուսաթան գիւղի մէջ է Խլայ կամ Խլու վանքը: Այսպէս կոչուած՝ վանս զի հոս կու գան խուլերը լսողութիւն ընդունելու համար եւ ականջի ցաւի բուժուողներն՝ անկէ բուժուելու համար: Աւերակի վերածուած շատոնց (Միրախորեան, Ուղեւորութիւն, Բ., էջ 271 եւ Ազգր. Հանդ., 1911, էջ 100. 1916, էջ 210):

11. ՆԱՆԱՎԱՅՅԻ ՎԱՆՔԸ

Շատ դոյզն է վանքիս մասին եղած ծանօթութիւնը: Ձեռագրի մը մէջ կայ՝ «Արդ գրեցաւ ի դուռն Նախավայրի... ի գեղս Առեղս, յերկրի Տարբերուելոյ որ կոչի Բերկրի» ի ձեռն Սարգսի (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 176):

<sup>9</sup> Աւետարան մը գրուած է՝ «Առ սոս սրբոյ Աստուածածնին Ընծայեաց ի տեղիս որ կոչի Ուս ընդ հովանեալ սրբոյ Շմոնիկի եւ սուրբ թագաւորի» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 176):

հայ. Ձեռ. Վասպ., էջ 510. ուր էջ 50՝ կ'ըսուի՝ «Տեղի՝ Նախավայրի վանք Բերկրում»:

12. ՏԵՐ ՅՈՒՍԿԱՆ ՈՐԴԵՅ ԵՒ ԱՐԳԵԼԱՆԻ ՎԱՆՔԵՐԸ

Տէր Յուսկան որդւոյ<sup>10</sup> (Ստեփաննոսի) եւ Արգելանի վանքերը երկու տարբեր վանքեր են, որոնք սակայն յետոյ միացած են եւ կազմած մէկ միաբանութիւն ու համայնք: Նախ շինուած է Արգելան վանքը, ուր Ստեփաննոս Յուսկան որդին իւր օրերէն մաս մը անցուցած է եւ ապա Յուսկան որդւոյ վանքը, որ անոր սրբարանն ու գերեզմանը կ'ըլլայ եւ անոր հոշակոյն աւելի անուանի կը հանդիսանայ:

Տէր Յուսկան որդւոյ վանքը կ'իջնայ Բերկրի գաւառի մէջ՝ Ալատաղի ժայռային լեռնաշղթայի ստորոտը: Հ. Սարգիսեան այսպէս կը նկարագրէ՝ «Տէր Յուսկան որդի — Առ Բերկրաւ յայնկոյս գետոյն որ եւ կոչի Պանտումահի գետ, որ/ի ձորամիջոյն եկեալ հոսի ի ծովն ի բարձրաբերձ քարալերին որ յաջմէ դաշտին է յահագնատեսիլ փառարս քարաժայռին մեծի շինեալ է մենաստանս յանուն սրբոյն Ստեփաննոսի որդւոյ Տեառն Յուսկան, որ էր յԱրտամեայ, որպէս պատմեն Յայտաւուրք: Բարձրահայեաց զիւրք մենաստանիս ի վերայ դաշտին Բերկրոյ գեղատեսիլ է յոյժ, որ եթէ եւ յընդարձակ վայրի էր բարձրութեամբն եւ ի դուրան տեղուջ եւ վերելք նորա գիւրին, քան զբարձրամս ի վանորէից ցանկալի էր, եթէ եւ քարաժայռք նորա ի բարձանց ցցեալ ուղիղ ի վերայ մենաստանին ոչ ահարեկէին զոք, թէպէտ ըստ վկայելոյ միաբանից աւանդութեամբ հասեալ է առ նոսա, ի շինութենէ եւ այսր ոչ մի վտանգ եղեալ կամ գերծեալ մասանց քարաժայռին (Տեղագրութիւնք, էջ 266. Հմմտ. եւ Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 167 եւ Մշակ, վայրեր, էջ 81 եւ Արեւելք, 1887, Թ. 1181):

Յուսկան որդւոյ վանքին<sup>11</sup> ժայռերուն ճարտարութեամբ կ'ընդհանրուի Տէր Յուսկան վանքը: «Այս տաճարի սեղանի կամարն ու արեւելեան մասի գմբէթը դեռ կանգուն կը մնան եւ փլած պատի

լայնութիւնը 2½ մետր կը լինի, վար ձգուած քարերն ոմանք քառակուսի, ոմանք երկար 8—10. ոտնաչափ. պատի թանձրութիւնն եւ պինդ կիրէ շինուածքն կը յայտնեն որ մի աւերիչ ձեռք զիրենք բռնի խախտած, քակած եւ վար ձգած է (Ոստանիկեան, Արեւելք, 1887, Թ. 1181):

Արգելանի եւ Յուսկան որդւոյ եկեղեցիներն ու խորանները, ինչպէս Ձեռագիրներու յիշատակագրութիւններէն յայտնի պիտի ըլլայ, կոչուած են՝ Ս. Աստուածածին, Ս. Յարութիւն, Ս. Նշան եւ Ս. Կարապետ: Այս երկու վանքերն ալ ունեցեր են կանոնաւոր միաբանութիւն եւ եպիսկոպոսներ, ինչպէս յիշատակարանները կը վկայեն: Ոստան վկաներ են նմանապէս Յուսկան որդւոյ խաչքարերու վրայ քանդակուած եպիսկոպոսական զգեստներն ու թագերը (Արեւելք, 1887, Թ. 1181):

Երկու վանքերու հիմնարկութեան պարագաները կը մնան անձանօթ: Ստոյգ է որ նախ Արգելան շինուած է, որովհետեւ հոն կ'անցնէ իր կեանքը Ստեփաննոս վարդապետ որդի Յուսկան եւ յետոյ անոր ի պատիւ կը շինուի Յուսկան որդւոյ վանքը: Կարժէ ծանօթանալ Ստեփաննոսի իբրեւ այս վանքերու պարծանքին: Իր կենսագրական գծերը կը քաղեմ մեր Թ. 10 Յայտաւուրքէն թղ. 243բ—245բ (Հմմտ. Տաշեան, Յուլ. հայ. Ձեռ. Վիենն. Մխիթ. Մատ., էջ 70):

Ստեփաննոս որդին է Տէր Յուսկան քահանային, որուն կինը Ռ. Զ. Թուականին թաթարական զինուորներէ գերուելով Թաւրիզ կը տարուի: Հոն կը վաճառուի քրիստոնէայ կնոջ մը, որ Յուսկան քահանային խնդրանքներու վրայ զինքը ազատ կ'արձակէ պայմանով որ՝ եթէ Յուսկան որդի ունենայ եւ նա քահանայ ըլլայ «տալ հոգւոյ իմոյ զառաջին պատարագ որդւոյ քոյ ի քաւութիւն մեղաց իմոց» (թղ. 244ա): Իրապէս ալ Յուսկան որդի մը ունենալով զինքը կ'անուանէ Ստեփաննոս, որ կ'ըլլայ «խոհեմ եւ իմաստուն, ժուժկալ եւ համբերող, ուսումնասէր եւ ըրակ(ը)աց, համբարող եւ ողորմած» (թղ. 244բ): Ստեփաննոս իր շափազանց աղքատախորութեամբ տան համար աղացուած ալիւրն ամբողջապէս աղքատներուն կը բաժնէ եւ պարկին մէջ աւաղ լեցնելով կը բերէ տան բակը կը ձգէ եւ կը փախչի Բերկրի: Մայրը սակայն աւաղի տեղ ալիւր կը գտնէ: Քիչ վերջ հայր ու մայր հասու կ'ըլլան տղուն բացակայու-

<sup>10</sup> Վարդան Աշխարհապետ կը գրէ՝ «Արեւանի եւ Տարբերուելի Բերկրի է, ուր կայ սուրբ ուխտն Տէր Յուսկան որդւոյն» (Saint-Martin, Mémoires, Բ., էջ 426. Հմմտ. եւ Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 195—196):  
<sup>11</sup> «Որ կայ շինեալ սա ափն Պանտի մասու գիւղոյն, որ թափի է լիճն Վանայ» (Նոտարք, էջ 226):

թեան եւ ամէն կողմ զինքը կը փնտռեն, մինչեւ որ օտարէ մը կ'իմանան թէ՛ իրենց զաւակը Բերկրի տեսնուած է: «Եւ յարուցեալ տէր Յուսէփն, զնաց ի Բերկրի, ել ի վանքն յԱրգելան եւ եզիտ զտղայսն» (անդ, թղ. 245 ա): Հայրը ուրախութենէն կուլայ եւ որդւոյն փախուստին պատճառը կը հարցնէ: Ստեփանոս կը պատմէ իր ըրած բարեգործութիւնն ու հնարամտութիւնը եւ ծեծ ուտելու երկիւղը: Հայրը կը ծանօթացնէ զինքն եղած հրաշքին եւ որդին կը յորդորէ տուն վերադառնալով խանդակաթ մայրիկին արտասուքները ջնջել: Սակայն Ստեփանոս կը պատասխանէ՝ «Ես յայս վանացս այլ (ոչ) ելանեմ, աստ կացից որքան եմ կենդանի եւ աստ մեռայց»: Վանքին միաբաններն եւս զինքը կը յորդորեն տուն դառնալու, սակայն նա իր որդու մին վրայ հաստատուն կը մնայ: «Եւ մնացեալ Ստեփանոս ի վանքն Արգելան եւ վարժեալ աստուածային գիտութեամբ եղև արեղայ» (անդ, թղ. 245 ա): Հայրն այն ստեն զաւակին կը պատմէ մայրիկին զերութիւնը եւ ազատարար կնոջ եղած խոստումը: Ստեփանոս իր անդրանիկ պատարագին մէջ կը յիշատակէ կինը եւ ահա տեսիլք մը կ'ունենայ. «քանզի ապշուիւն կալաւ զնա եւ տեսանէր զինքն յեզր արեան ծովու եւ կինն այն բիպի ի մէջ արեան ծովու եւ յորժամ նորակնուք քահանայն զազալթս պատարագին աւէր կինն ի դուրս գայր յարեան ծովէն եւ հանեալ եղաւ ի ցամաքն» (անդ, թղ. 245 ա): Երկար կը տեսէ Ստեփանոսի պատարագը, որ իր առաջին ու վերջին պատարագը կ'ըլլայ հակառակ յորդորներու, վասն զի նա կը պատճառարանէր՝ «Թէ արեան ծովու ոչ եմ կարող ընդզէմ կալ» (անդ, թղ. 240 բ):

Ապա՝ «Կացեալ ի նոյն վանս Արգելան եւ անդ վարժեալ եղև վարդապետ ճշմարտութեան եւ յերկարեալ ի բազում աւուրս բարի եւ առաքինասէր վարուք ի հաճոյս կամացն Աստուծոյ եւ փոխեցաւ ի Քրիստոս» (անդ, թղ. 240 բ):

Այսքանը մեր Թ. 10 Յայտմաւորքի համեմատ: Գալուստ Տէր Մկրտչեան «Հայկականք» ի մէջ (Վաղարշապատ 1899, էջ 87) հրատարակած է «Պատմութիւն միւս սքանչելեացն եղեալ ի սուրբ վարդապետէն ի յառնէն Աստուծոյ տէր Յուսէփ սրբուոյն»: Կը սկսի՝ «Եւ եղև ի վրդովման ժամանակաց եւ յասպատակմանէ հինից այլազգեաց ելանել սուրբ վարդապետին յերկրէն Տարբերունայ

ի սուրբ մենաստանէն Արգելինայ եւ զնալ ի լեանն Սաղղլուի եւ անդ առանձնանալ ի սուրբ անապատին որ կոչի Էրէրնալանք» (էջ 87): Հոս կարճ ժամանակամիջոցի մէջ «Էրանէր համբաւ ճշնողական վարուց»: Ամէն կողմանէ իրեն դիմումներ կ'ըլլան հոգեւոր եւ մարմնաւոր կարիքներու համար եւ Ստեփանոս անոնց խնդիրները կը կատարէ: Այլադաւան մտազործ մը զինքը փորձի կ'ենթարկէ եւ իր «կոճ»ը, Ստեփանոսի աղօթքին կը յանձնէ իրբեւ իր հայրը: Ստեփանոս կոճին համար կ'աղօթէ եւ ահա մտազործը «ետես զկոճն զի կանանչացեալ էր»: Այլադաւանը բնական է կը յուզուի եւ քրիստոնեայ կ'ըլլայ, իսկ Ստեփանոս կը զանայ իր վայրը՝ «Եւ եղև խաղաղանալ երկրին Տարբերունայ, զարձեալ զնաց սուրբ վարդապետն ի յառաջին բնակութիւն իւր ի սուրբ ուխտն, որ կոչի Արգելան եւ յերկարեալ բազում աւուրս բարի եւ առաքինասէր վարում ի հաճոյս կամացն Աստուծոյ: Եւ հանդեաւ խաղաղական մահուամբ ի Քրիստոս: Եւ եղաւ նշխարք սորա ընդ հովանեաւ ամենասուրբ Աստուածածնին եւ սուրբ Կարապետին ի վանս իւր Արգելան, յարեւմտից կուսէ արքայանիստ քաղաքին» (Անդ, էջ 90)<sup>12</sup>:

Գալուստ Տէր Մկրտչեան (համտ. անդ, էջ 83) սա կարեւոր ծանօթութիւնը ունի՝ «Աւղերեանը, չգիտեմ ինչ աղբիւրներից առնելով Ստեփանոսի մահը զնում է յամի իբր 1251 = 2, մինչդեռ այս սուրբ ծնուած լինելով 1224ից յետոյ հաղիւ 25 տարեկան կլինէր 1250 թուին, որ չէ նշանակում երկար ապրել: Ստեփանոսի մահը հաւանականաբար տեղի ունեցաւ 13րդ դարու վերջերում» (տես Աւղերեան, Լիակատար Վարք Սրբոյ, հատ. ԺԲ., էջ 354):

Ամէն պարագայի 1291ին արդէն շատոնց մեռած էր: Այդ թուականին կը գրուի Արգելան վանքի մէջ աւետարան մը՝ «Գրեցաւ... ձեռամբ յոգնամեղի եւ փցնաման Յակոբ կրօնաւորի ի սուրբ անապատս Արգելան ընդ հովանեաւ սուրբ Նշանիս. Յուսէփ սրբուոյ եւ սուրբ Աստուածածնիս եւ այլ եկեղեցեացս ի խնդրոյ երանեալ եւ պատուական

<sup>12</sup> Կիրակոս Գանձակեցին կը գրէ՝ «Ընդ այնուիկ աւուրս ժամանակաց էին վարդապետք առաքինիք եւ լուսաւորք, որք փայլէին յաշխարհի իբրև լուսաւորք Ստեփանոս սրբի Յուսէփն, այդ սքանչելագործ եւ սուրբ, որ եւ զերեզման նորա յեա մահուան բժիշկ էր ամենայն ախտալոց» (Պամ. Հայոց, էջ 91), որ կայ եւ սա ծանօթութիւնը՝ «Ի կողմանց Վանայ ուր եւ Արգելանի վանք նորա եւ զերեզման, մերձ ի ծայր ծովուն»:

քահանայի Գէորդիա<sup>13</sup>» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 87):

Արդէն 1294ին Արգելանի առաջնորդ կը գտնենք տէր Սարգիս, որուն օրով նոյն Յակոբ կ'արտագրէ ուրիշ Աւետարան մը՝ «Գծադրեցաւ... ի թուարբերութեան հայ տուրքի եօթնհարիւրերորդի քառասներորդի երրորդի ի դաւառիս Տուրբերանոյ ի հայրապետութեան Տեառն Ներսիսի Հայոց վերադիտողի... եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս Արգելանա տէր Սարգիս: Ընդ հովանեաւ կենսունակ սուրբ Նշանիս, Յուսէփ սրբոյ եւ սուրբ Աստուածածնիս՝ եւ այլ սրբոց եկեղեցեաց» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 116):

Հաւանօրէն Սարգիս առաջնորդի յաջորդն է Վարդան եպիսկոպոս, որուն օրով կը գրուի Մաշթոց մը բովանդակալից յիշատակագրութեամբ՝

«Յամի Հայկազեան տուժարի արեթական տոհմի 22 (1331) երրորդի ի թագաւորութեան Արուսայից սուլթանի ազգի նետուցաց, եւ մերում թագաւորի Հայոց ազգի Լեւոնի թագաւորի եւ Բարթեղի Էլիսանայ իշխանի ի հայրապետութեան Տեառն Զաքարիայի, յեպիսկոպոսութեան ստացողի զրոց տէր Վարդանայ<sup>14</sup> ի մենաստանին որ կոչի Արգելան ընդ հովանեաւ Աստուածածնիս եւ սուրբ Նշանիս եւ Յուսէփ սրբոյ սուրբ զերեզմանիս եւ Յովհաննէս մեղապարտ եւ անպիտան ի պիտանիս հարկեալ յեզրաց զծաւրեցի զչնորհալից զտառս սրբարար եւ աստուածհրաշ ըստ խնդրոյ եւ փախողանայ նորակնեալ եպիսկոպոսի ի ժամ հասեալ ծերութեանս, քանզի պատուհանք լուսարանայ պակասեալ եւ ձեռքս խոպանացեալ զողորմէր վասն բազում ժամանակաց խափանելոյ ի զործոյս եւ ոչ գոյր օրինակ ըստ պատշաճի»: Ապա կայ եւ՝ «Զվերջին կազմող սուրբ Մաշթոցիս զտէր Մարտիրոս Արգելանիս յիշման արարէք զիս արժանի» (Conybeare, Cat. Brit. Թ. 30, էջ 58—60):

ԺԵ. դարու մէջ Տէր Յուսէփ սրբուոյ վանքին մէջ կը ծաղկի եւ նոյն վանքին առաջ-

<sup>13</sup> 1284ին գրուած Աւետարանի մը յիշատակարանին մէջ կայ՝ «Ի թիւ Հայոց 219. գրեցաւ Աւետարանս... ի վանս Հաւարձին կոչեցեալ ընդ հովանեաւ սուրբ Գրիգորիս մերոյ Լուսաւորչի ի ձեռն... քահանայի Աստուածատու Յուսէփ սրբուոյ...» (Թորոս Աղբար, Բ., էջ 330):  
<sup>14</sup> Վարդան ամուսնացած քահանայի մը՝ «Յակոբի որդին էր: Վերջինս Արգելանի «հաւատարիմ» էր եւ կը մեռնի 1330ին (համտ. Conybeare, Cat. Brit. Թ. 30):

նորդ կ'ըլլայ Թովմաս Մեծոփեցիի սիրելին Մկրտիչ վարդապետ Օրբելեանց, որ նմանապէս կոչուած է Բերկրցի (համտ. Գ. Վ. Յովսէփեան, Թովմաս Մեծոփեցու կեանքը, Վաղարշապատ 1914, էջ Թ. եւ ԺԷ. էջ):

Հոս 1414ին կը գրուի Լուծմունք դժուարիմաց բանից, որուն յիշատակարանին մէջ կ'ըսուի՝ «Ես Մկրտիչ պիտակ անուն խնդրող բանի... ետու գրել զսա ձեռնասուն եւ հեղահոգի աշակերտիս իմոյ Մկրտիչ կրանաւորի ի վայելս սիրողաց բանի. նաեւ հոգեւոր հաւրս մերոյ եւ բազմերախտ խրատաւորի Կարապետ կրանաւորի...: Արդ զրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՊԿԳ ի դաւառիս որ կոչի Տարբերունի ի սուրբ ուխտս որ կոչի Տէր Յուսէփ սրբի ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ Յարութեանս եւ սուրբ Կարապետի եւ սքանչելագործ սուրբ Նշանիս, որ կոչի Կարմիրակն... առ ոսոս Ստեփանոս վարդապետի եւ հօր վանաց Մելքիսեթի... յիշեսցէ եւ զՄկրտիչ զծոյս... եւ զխրատիչն իմ զՄկրտիչ վարդապետ եւ զԿարապետ կրանաւոր» (Թովհեան, Յուլ. հայ. Ձեռ. Դաղեան Վ. ի, էջ 62)<sup>15</sup>:

Մկրտիչ 1418ին գրուած Աւետարանի մը մէջ իբրեւ առաջնորդ կը յիշատակուի: Յակոբ գրել էր մաղթէ յիշել՝ «Զերջանիկ եւ զերանաշնորհ քարոզն կենաց զՄկրտիչ զառաջնորդ սուրբ ուխտիս» (Նօտարք, էջ 54—55): Իսկ ինքը Մկրտիչ իր գրած աւետարանի յիշատակարանին մէջ Մելքիսեթ միայն կը յիշէ, որուն հետ սակայն ինքն ալ առաջնորդութիւն կ'ընէր: Ահա իր յիշատակարանը, որ 1420ին գրուած է՝

«... Եւ արդ ես յետինս ի կրօնաւորաց եւ անպիտանս ի բանասիրաց անարժան ի մանկուսն եկեղեցուց եւ անխմատ ի քարտուղարաց (է նոյն իսկ նշանաւոր Մկրտիչ վանահայրն Տէր Յուսէփ սրբուոյ ուխտին, զոր յիշատակէ Յակոբ կրօնաւորն ի թիւն 54 ի վերոյ [աւետ. գրեալ 1418], Նօտարք, ծն. 4, էջ 60), շնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՊԿԳ... ի դաւառիս Տարբերունի, որ այժմ կոչի Բերկրի ի սուրբ ուխտս, որ կոչի Տէր Յուսէփ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Յարութեանս եւ սուրբ Կարապետիս եւ սքանչելագործ սուրբ Նշանիս որ կոչի Կարմիր

<sup>15</sup> Համտ. Արձագանք, 1885, էջ 123:

ակն ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս Մեղքիսէթ հեղահոգի եւ աստուածարան վարդապետի, եւ այլ միեղէն եղբարցս հողեւոր եղբորս իմոյ, որ բազում պիտոյիք սպասաւորէ մեզ, Յակոբայ Խօյեցւոյ, Կիրակոսի եւ Յովաննիսի Մկրտչի եւ Վարդանի, համարուեստակից եղբորս Յակոբի, Սիմօնի եւ Կիրակոսի, Ստեփաննոսի եւ Յովաննիսի, նաեւ սպասաւորաց մարմնաւոր պիտոյից մերոց հայր Սարգսիս եւ Գորգի անտեսին եւ Մկրտչի մաճակալին եւ Աստուածատուր միայնակեցին եւ Մեծատուր հովուին եւ դամենայն միարանքս սուրբ ուխտիս Տէր Աստուած հանգուցանէ զոոսա յարքայութեան իւրում. ամէն...» (Նօտարք, էջ 60—61) :

Մեղքիսեղեկ եւ Մկրտչի առաջնորդներու եւ Տէր Յուսկան որդւոյ միաբաններու յիշատակութիւնները գեռ կ'ըլլան ուրիշ Ձեռագիրներու մէջ (հմմտ. 1422ին՝ Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 347—350. Նօտարք, էջ 69—70. 1425ին, Լոյս, 1905, էջ 518—519. գուցէ նոյն թուին, Թորոս Աղբար, Բ., էջ 354—355, դարձեալ 1425ին, Նօտարք, էջ 78—79, 1432ին՝ Նօտարք, էջ 100—101, 1439ին՝ Նօտարք, էջ 118—119. հմմտ. Առաք. Դաւրիթ., էջ 416) : Հոս կը դնեմ հետեւեալ յիշատակարանը, որ 1439ին գրուած Աւետարանի մը մէջ կայ՝

«Փառք... արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՊԶԸ ձեռամբ Գրիգորի սուտանուն կրանաւորի... ի վանս որ կոչի Արդելան ընդ հովանեաւ մաւրս լուսոյ սուրբ Աստուածածնի եւ սուրբ Կարապետի եւ սուրբ Յարութեան եւ սքանչելագործ Ս. Նշանի որ Կարմիրակն կոչի եւ տէր Յուսկան որդոյ սուրբ գերեզմանի : Ի հայրապետութեան Լուսաւորչի քանդի յայսմ ամի վերացեալ եղեւ սուրբ աջն ի Սայ եւ ոչ կայր կաթողիկոս : Ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս տիեզերալոյս եւ աստուածարան վարդապետին Մկրտչի որ յայսմ ամի փոխեցաւ առ անձկալին իւր Քրիստոս... : Եւ ի հայրապետութեան սրբասէր եւ բարեմիտ կրօնաւորին Յովհաննիսի եւ հեղահոգի եւ խաչընդուս փիլիսոփայի Յակոբի հոգեւոր հօրս մերոյ : Ազաչեմ յիշել ի բարին Քրիստոս գերիցս երջանիկ եւ գերանաչնորհ վարդապետն Մկրտչի զհոգեւոր ծնողն իմ եւ զուսուցիչն որ բազում աշխատութեամբ ուսոյց ինձ գիր... ընդ նոսին... զբարի կրօնաւորն Մինաս, ուր երփն երփն եւ երանց երանց

դունով զարդարեաց զաւետարանս... այլ եւ գանպիտան զծօղս եւ զեղբայրն իմ զԱթաբէկն եւ զՍայիջըհանն եւ զհօրեղբայրն իմ զՄարթէկն... եւ գերանաչնորհ վարդապետն Մկրտչի զառաջնորդ լման սուրբ ուխտիս եւ զեղբայրն իւր զՍտեփանոս քաջ փիլիսոփայն :

Ստացաւ զսուրբ աւետարանս... Աստուածատուր կրօնաւոր (ծնողքն Պետրոս եւ Խաթունմէլիք, հօրեղբայրն Յովհաննէս, † Էդիմէլիք, որոնց որդիներէն մին է՝ «տէր Գրիգոր Եպիսկոպոս» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Տէր-Աւետիսեանէ, Յուլ. Նոր Ձուղ. Թ. 84 [Աւետարան առ Մկրտչի Մատթէոսեանի]. հմմտ. Նօտարք, էջ 118—119 եւ Առ. Դաւ. Պտմ., էջ 416) :

Պէտք եմ լուսաւորութեան համար յաւելուլ որ Արդելանի առաջնորդները երկու են, վասն զի անոնցմէ մին Բերկրիի Եպիսկոպոս է եւ միւսը վանքին վանահայր : Մկրտչի նախ վանքին եւ ապա Բերկրիի առաջնորդ եղած է :

Յայսմաւուրքի մաս մըն ալ 1457ին «ի վանս Արդելան» կ'աւարտէ Ղազար, որ ստեղծած էր «վանս խոնովութեան աշխարհիս» երեք տեղ փոխել իր գրութիւնը վերջացնելու համար (Աճառեան, Յուլ. հայ. Ձեռ. Թաւրիղի, էջ 103) : Իսկ 1462ին Ձաքարիա, կաթողիկոս կ'այցելէ նաեւ «ի սուրբ ուխտն, ուր հանգուցեալ կայ պատուական նշխար սուրբ վարդապետին Ստեփաննոսի տէր Յուսկայ որդւոյն» (Առ. Դաւր., էջ 423) <sup>16</sup> :

Ազարիա 1464ին՝ «ի վանս Արդելան ի յերկիրս Տարբերունոյ ի խնդրոյ Վարդանայ առաջնորդին Մեծոփայ վանից» կը խազէ Ծարակնոց մը (Ն. Մառ, Յուլ. հայ. Ձեռ. Սեւանայ, էջ 47) : Քանի մը տարի վերջ՝ 1475ին <sup>17</sup> Գրիգոր Վանական տէր Մկրտչի գործածութեան համար կ'արտադրէ աւետարան մը, զոր ետքէն Արիստակէս Եպիսկոպոս Ս. Կարապետ կը տանի (Պայքար, 1926, Թ. 294) : Երեք տարի վերջ 1478ին Գրիգոր Ծարակնոց մը կը գրէ եւ իրբեւ առաջնորդ կը յիշատակէ Յովհաննէս հեղահոգի արքեպիսկոպոսը եւ երջանիկ ու արի աստուածարան Մկրտչի վարդապետ :

Յիշատակարանը կը կցեմ՝

<sup>16</sup> Հմմտ. նաեւ Հ. Ն. Ակինեան, Գաւազանագիրք կաթողիկոսայ Աղթամարայ, էջ 85—95 :  
<sup>17</sup> 1473ին կը գրուի ի Բերկրի ընդ հովանեաւ Տէր Յուսկան որդւոյ Աւետարան մը «յառաջնորդութեան Մկրտչի քաջ եւ արի բարունապետին եւ ի հայրապետութեան տէր Յովհաննէս արհեպիսկոպոսի» ձեռամբ Կարապետի (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 466—468) :

«Աւարտեցաւ... Ծարակնոցս ի թուականութեանս Հայոց Զ եւ ի է յերկիրս Տարբերունի ի սուրբ եւ յաստուածարանակ մենաստանիս յԱրդելան, որ է հանդէպ քաղաքիս Բերկրոյ ձեռամբ... սխալագիր գրչի Գրիգորի Բերկրեցւոյ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի տաճարիս եւ սուրբ Կարապետի եւ սուրբ Յարութեան եւ հրաշալի սուրբ գերեզմանին տէր Յուսկան որդւոյ եւ սքանչելագործ Կարմիրակն սուրբ Նշանի եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Յովհաննէս հեղահոգի արհեպ. ի եւ երջանիկ եւ արի աստուածարան Մկրտչի վարդապետի հարապատի իմոյ ի հայրապետութեան տեսուն Յովհաննէսի եւ տեսուն Սարգսի արհեպիսկոպոսի Եղնիկացւոյ, որ ընդ ձեռամբ իւրով զբաւեալ ունի զկաթողիկոսարանն եւ մեծ արիւթիւնս արար աղատելով զԷբրիսն Վրաց տան ի Հասան պէկին, որ յայսմ ամի եղեւ, այլ եւ յայսմ աւուրքս Օղուրլու որդի Հասան բէկին ի զաւարացն հաւրն, այլ ոչ հրամանաւ նորս» :

Կը մաղթէ յիշել՝ «Յիշեցէք զԳրիգոր զծոցս եւ զծնողս իմ զԱթաբէկ եւ զՍայիջըհան եւ զպսակ զլիսոյ իմոյ զհարապատն զՄկրտչի աստուածարան բարունապետն եւ զուսուցիչն եմ զարի եւ զքաջ վարդապետն զՄկրտչի» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ., Ծարակնոց Մուշի Ձորոյ թաղի կօշկակար Աբրոյենց տէր Միխիթարի) :

Այս յիշատակարանէն աւելի կարեւոր է ուրիշ Ծարակնոցի մը յիշատակարանը (գրուած 1497ին), որմէ կարելի է հետեւցնել որ Յովհաննէս մեռած է եւ անոր յաջորդ կ'ըլլայ Ստեփանոս. իսկ Մկրտչի կը շարունակէ իր վանահայրութիւնը՝

«Փառք... որ ետուր զօրութիւն իմոյ տկարութեանս հասանել ի յաւարտ այսմ եղաւ նախաւոր լուսալիսոյ տառիս : Արդ գրեցաւ յերկիրս Տարբերունոյ ի սուրբ մենաստանիս, որ կոչի Արդելան ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Կարապետի եւ սուրբ Յարութեան եւ սուրբ վարդապետի զանիս, զոր է աւժեալ սուրբ վարդապետն զանիս, զոր է աւժեալ սուրբ վարդապետն աստ կան հաւաքեալ ի կաթողիկոսութեան տէր Սարգիս, որ է նստեալ ի Վաղարշապատ քաղաքի եւ յԱղթամար տէր Ատոմի եւ ի թաղաւորութեան ընթացումի : Արդ գրեցաւ սա զաւորութեան ընթացումի : Արդ գրեցաւ սա ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս Մկրտչի

մեծ բարունոյ եւ հողիազարդ Եպիսկոպոսի տէր Ստեփանոսի, որ այս մին ամ է որ ամենեցուն միաբանեալ յուղարկեցին ի քաղաքն Վաղարշապատ հրամանաւ մեծի բարունապետիս Մկրտչի եւ ետուն աւժել առ ի յառաջնորդութիւն իւրեանց, զոր Տէր Աստուած պահեսցէ զսայ յամենայն հնարից չարին : Այլ եւ ի հէրպետութեան բարէբարոյ եւ մաքրամիտ կրանաւորի Մկրտչի սրբասիրի եւ այլ ամենայն միաբանիցս առ հասարակ զոր ի յոյսն ամենայնի պահեսցէ զոոսա խաղաղական կենաւք ի հաճոյս կամաց իւրոց ամէն : Քանոր սիրով ընդունեցին եւ ընկալան զմեզ իրր զվազ ժամանակաց եղբայր եւ պատուով մեծարէին զիս, ոչ ըստ անարժանութեան իմում, այլ ըստ բնածին բարի բարուցն իւրեանց, զոր Տէր Աստուածն մեր հատուցէ սոցա պարգեւս յիւր անճառ պարգեւացն. ամէն :

Գրեցաւ սա ի թվականութեան մերոյ ԶԽԶ ամին : Արդ ես յետինս եւ անպիտանս յամենայնի Յովսէփ սոսկանուն կրանաւոր անուամբ միայն եւ ոչ գործով. վասն զի յոյժ հեռացեալ եմ յամենայն բարեկործութեանց ծոյլ եւ պղերդ ի մանկանց եկեղեցւոյ : Ըստ իմում կարի գրեցի զսա յընտիր աւրինակէ, զոր է գրեալ ձեռամբ քաջ քարտուղարին Գրիգորի Ուու կոչեցելոյ ի վայելում (Երեմ սող ջնջուած) : Ով մանկունք սուրբ եկեղեցւոյ որ հանդիպիք սմա աւրինակելով կամ ինչ իւրք տեսութեամբ յիշեցէք ի Քրիստոս զսոցոյ սորա զՍտեփանոս կրանաւորն եւ զծնողսն իւր զՅովաննէսն եւ զՈնոգքարն եւ զեղբարսն իւր զպարոն Գորգն՝ զհանգուցեալն ի Քրիստոս եւ զՂարիպէն եւ զքուերսն իւր զԻհհհհհն եւ զՄէլիքիաթունն եւ Աստուած յիշողացդ ողորմեսցի :

Այլ եւ աղաչեմ յիշել ի Տէր զհոգեւոր հայրն եւ զկրկին զծնաւորն իմ յիմաստս զտէր Կարապետ Բերկրցին, որ բազում աշխատութեամբ ուսոյց մեզ զարուեստքս՝ զչինել մաղաղատիս եւ զգրել սորին. այլ եւ զնկարին, որ եւ ընդ հովանեաւ սորա ծաղկեցի զսա ոսկով եւ բազմերանդ զունով. զոր եւ Տէր Աստուածն ամենայնի փրկեսցէ զսա յամենայն հնարից սատանայի : Դարձեալ աղաչեմ յիշել ի Տէր զհամշիրակ եղբայրն իմ զՍմբատ սարկաւազն, որ բազում աշխատեցաւ ի շինել մաղաղատիս, զոր Տէր Աստուած տացէ նմա շնորհս եւ ջանս ուսումնասիրութեան ամէն : Այլ եւ աղաչեմ յիշել առ Տէր զտէր Ստեփա-

